



ՓՄԲՀ



AFIC

**Մասնավոր ձեռնարկատիրությունը
ՀՀ նախագահական ընտրություններ
2008-ին ընդառաջ.
Գնահատականներ և ակնկալիքներ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Ձեռնարկատիրությունն այսօր (ըստ ոլորտի ներկայացուցիչների)	6
Ձեռնարկատերերի ակնկալիքները	12
Ձեռնարկատիրության վաղվա օրը (ըստ ՀՀ նախագահության քեկնաձուների)	20
Հավելված 1	31
Հավելված 2	34

ՆԱԽԱԲԱՆ

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» և «Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ստոցիացիա» ոչ առևտրային կազմակերպությունները, կարևորելով երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված բարեփոխումների հետևողական իրականացման անհրաժեշտությունը, նախազահական ընտրությունների նախօրեին նախաձեռնեցին մի ծրագիր, որի նպատակն էր հարցման միջոցով.

- բացահայտել գործարար հանրության ընկալումը մասնավոր ձեռնարկատիրության զարգացման ճանապարհին առկա խոչընդոտների և հիմնախնդիրների վերաբերյալ,
- բացահայտել մասնավոր ձեռնարկատիրության զարգացման ճանապարհին առկա խոչընդոտների և հիմնախնդիրների վերացմանն ուղղված նախազահության թեկնածուներից յուրաքանչյուրի դիրքորոշումն ու մոտեցումները,
- իրազեկել նախազահության թեկնածուներին մասնավոր ձեռնարկատիրության զարգացման ճանապարհին առկա խոչընդոտների և հիմնախնդիրների գործարար հանրության ընկալման վերաբերյալ,
- իրազեկել գործարար հանրությանը վերը նշված խնդիրների լուծմանն ուղղված նախազահության թեկնածուներից յուրաքանչյուրի մոտեցումների վերաբերյալ:

Հարցումն իրականացվել է Երևանում, Գեղարքունիքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում, Երևանի և Գեղարքունիքի մարզի Առևտրա-արդյունաբերական պալատների, Տավուշի մարզում գործող «Դիլնետ Մերվիս» և Վայոց Ձորի մարզում գործող «Աշխատանք և Հայրենիք» հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ և օժանդակությամբ: «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ»-ը և «Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ստոցիացիա»-ն իրենց երախտագիտությունն են հայտնում այդ կազմակերպություններին հարցման իրականացման ընթացքում ցուցաբերած գործուն աջակցության համար:

Հարցմանը մասնակցել են Երևանի և Գեղարքունիքի մարզի Առևտրա-արդյունաբերական պալատի անդամները, «Դիլնետ Մեր-

վիս» և «Աշխատանք և Հայրենիք» հասարակական կազմակերպությունների շահառու հանդիսացող գործարարները:

Մասնավոր ձեռնարկատիրության ներկայացուցիչներին տրված հարցերը ամփոփված են Հավելված 1-ում բերված հարցաշարում.

Երևանի, Գեղարքունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի մասնավոր ձեռնարկատիրության երեք և կես հարյուրից ավել ներկայացուցիչների շրջանում անցկացրած հարցման արդյունքների հիման վրա ձևավորվեց մասնավոր հատվածի մտահոգություններն ամփոփող հանգուցային հիմնահարցերի այն շարքը, որը նախաձեռնող խումբը որպես ոլորտի ներկայացուցիչների յուրօրինակ պատգամ ներկայացրեց նախագահության թեկնածուների ուշադրությանը: Այն բերված է Հավելված 2-ում:

Նախագահության թեկնածուների պատասխանները բացահայտում են նրանց դիրքորոշումը վերոհիշյալ հիմնախնդիրների վերաբերյալ և թույլ են տալիս գնահատել դրանց լուծմանն ուղղված մասնավոր հատվածի իշխանության գործադիր թևի հետ հետագա կառուցողական համագործակցության հեռանկարը:

Վերլուծական նյութը ամփոփում է երկու հարցումների արդյունքները: Այն ներկայացնում է ձեռնարկատիրության ներկայացուցիչների ընկալումն ու դիրքորոշումը «Ձեռնարկատիրությունն այսօր» և «Ձեռնարկատերերի ակնկալիքները» վերնագրերի տակ:

«Ձեռնարկատիրությունն այսօր» վերնագրի տակ բերված են հարցման մասնակից մասնավոր ձեռնարկատիրության ներկայացուցիչների հարցաշարում բերված հարցերի պատասխանները, իսկ «Ձեռնարկատերերի ակնկալիքները» վերնագրի տակ հեղինակները տեղադրել են այդ պատասխանները լրացնող հարցման մասնակիցների դիտարկումներն ու առաջարկությունները:


«Ձեռնարկատիրության վաղվա օրը» խորագրի ներքո ամփոփված են նախագահական ընտրություններ 2008–ի գործադիր իշխանության ամենապատասխանատու պաշտոնի համար հավակնող թեկնածուներին ուղղված հարցաշարի պատասխանները: Այս բաժնում ևս առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում հարցման մասնակիցների պատասխանները լրացնող և/կամ մեկնաբանող նյութը: Նման լրացումներն ու մեկնաբանությունները պարտադիր

չէին, այդ իսկ պատճառով նախագահության թեկնածուներից ոչ բոլորն են լրացրել հարցաշարում դրա համար նախատեսված մասը, ինչպես դա տեղի է ունեցել պարոնայք Արթուր Բաղդասարյանի և Տիգրան Կարապետյանի դեպքում: Ի տարբերություն նրանց, պարոն Արման Մելիքյանը չի պատասխանել առաջադրած հարցերին, հարցաշարի համապատասխան մասում բերելով դրա բացատրությունն ու մեկնաբանությունը:


ՁեռնարկԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՅՍՕՐ (ԸՍՏ ՀԱՐՑՄԱՆ ՍՄԱՆԱԿԻՑՆԵՐԻ)

Ձեռնարկատիրության ներկայիս օրվա պատկերը ըստ հարցման մասնակիցների հետևյալն է.


- Երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացման աստիճանը 40%-ի կարծիքով բավարար է, մինչդեռ 48%-ը այն գտնում են անբավարար:




- Տնտեսության մասնավոր հատվածին պետական կառավարման մարմինների կողմից ցուցաբերվող օժանդակությունը շատ բարձր են գնահատել 5 մասնակից (մոտ 0.01%): Գրեթե հավասար են կիսվել ձայները «որոշ չափով են օգնում» և «անտարբեր են» պատասխանների միջև (համապատասխանաբար 29% և 31%): Ըստ 24%-ի պետական կառավարման մարմինները կամ չեն օգնում, կամ նույնիսկ խանգարում են (13%) :



- Այդուհանդերձ, պետական կառույցների կողմից ծառայությունների մատուցումը արդյունավետ են գտնում 16%-ը անարդյունավետ՝ 55%-ը:



- Ըստ հարցման մասնակիցների՝ մասնավոր ձեռնարկությունների մոտ 50%-ը պետական մարմինների, կանոնակարգերի և վարչարարության հետ առնչվող խնդիրների լուծման համար ապավինում են “տանիքի” ծառայություններին:




«Տանիքի» ծառայություններին ապավինող ձեռնարկությունների թիվը

- Ոլորտում առկա առավել խոշոր խոչընդոտների դասակարգումը ըստ կարևորության համաձայն հարցման մասնակիցների հետևյալն է.

1.	Կոռուպցիա (259 ձայն)
2.	Գների անկայունություն, արժեզրկում (242 ձայն)
3.	Արժույթի փոխարժեքի տատանումներ (237 ձայն)
4.	Հարկեր և հարկային վարչարարություն (225 ձայն)
5.	Պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ոչ մրցակցային գործելակերպ (138 ձայն)


6.	Արդարադատության համակարգի անկատարություն (113 ձայն)
7.	Ֆինանսավորման մեխանիզմների անկատարություն (111 ձայն)
8.	Տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացք (99 ձայն)
9.	Գործարարության կանոնակարգման և վարչարարության անկատարություն (97 ձայն)
10.	Ենթակառուցվածքների (հեռախոս, էլեկտր., ջուր, ճանապարհներ) անբավարար վիճակ (69 ձայն)

- Երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացման հիմնական խոչընդոտները հարցման մասնակիցները դասակարգել են հետևյալ կերպ.
 1. Հարկային բեռը, բարդ հարկային համակարգը (285 ձայն)
 2. Կոռուպցիան պետական հատվածում (242 ձայն)
 3. Անբավարար պետական աջակցությունը (177 ձայն)
 4. Օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները (161 ձայն)
 5. Վարչարարական չարաշահումները (157 ձայն)
 6. Վարկերի դժվար մատչելիությունը (132 ձայն)
 7. Սեփականատիրական իրավունքի պաշտպանված չլինելը (105 ձայն)
 8. Դատաիրավական համակարգի անկատարությունը (86 ձայն)
 9. Թույլտվությունների և լիցենզիաների ստացման կարգը (74 ձայն)
 10. Ձեռնարկության հիմնադրման կարգը (28 ձայն):
- Մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում բարեփոխումների իրականացումը հարցման մասնակիցների 98%-ի կարծիքով անհրաժեշտ է կամ նույնիսկ խիստ անհրաժեշտ: Միայն 7 հարցման մասնակից (մոտ 0.02%) գտնում են, որ ոլորտում անելիք չկա, կամ գուցե ջանքերն ասպարոյուն են:



ՉԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Նորընտիր նախագահի կողմից տնտեսական բարեփոխումների խթանում են ակնկալում հարցման մասնակիցների 37% -ը: 21%-ը մնան ակնկալիքներ չունեն, իսկ 24%-ը գերադասում են զուշակություն չանել:



Հարցման մասնակիցների կարծիքների հիման վրա ձևավորված նորընտիր նախագահից ակնկալվող առաջնահերթ ոլորտային բարեփոխումների ցանկը հետևյալն է.

1. կոռուպցիայի դեմ պայքար (118 ձայն),
2. տնտեսական օրենսդրության կատարելագործում (112 ձայն),
3. հարկային և մաքսային բարեփոխումներ (108 ձայն),
4. արդար մրցակցային դաշտի ապահովում (104 ձայն),

5. համայնքների տնտեսական զարգացում (75 ձայն),
6. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ (63 ձայն),
7. ներդրումների խթանում (55 ձայն),

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հարցման մասնակիցների նշումները որպես «Այլ առաջարկություններ և դիտարկումներ».

- Այսօր ՀՀ-ի համար ամենակարևոր խնդիրը աշխատատեղերի խնդիրն է: Եթե ստեղծվեն աշխատատեղեր, բնակչությունը կունենա եկամուտ և ապրելու միջոց: Դրանից հետո կարծում եմ, որ ամեն ինչն իր տեղը կընկնի:
- Հայաստանում պետք է ստեղծվեն այնպիսի կազմակերպություններ, որոնք կապահովեն տարբեր տեղական ձեռնարկություններին միջազգային նմանատիպ կազմակերպությունների հետ համագործակցությունը:
- Հայաստանի համար լավ կլինի միայն այն ժամանակ, երբ կարգավորվեն հակամարտությունները և հարաբերությունները հարևանների հետ:
- ՀՀ-ի համար այսօր կարևոր խնդիր է կոռուպցիայի կրճատումը հատկապես պետական հատվածում: Դա այն հիմնական խոչընդոտներից է, որը խանգարում է մեր երկրի դինամիկ զարգացմանը:
- ՀՀ-ում անհրաժեշտ է սկզբնական շրջանում հարկային արտոնություններ տալ սկսնակ փոքր և միջին բիսնեսներին, մինչև նրանք գտնեն շուկայում իրենց պատկանող սեկտորը և հաստատվեն:
- Անհրաժեշտ է ծրագրեր մշակել, որպեսզի խթանվի օտարերկրյա ներդրումները Հայաստանում, ոչ միայն առևտրի, այլ նաև արտադրության և գյուղատնտեսության բնագավառներում: Դա կնպաստի աշխատատեղերի ավելացմանը:
- Անհրաժեշտ է, որ սկսնակ յուրաքանչյուր գործարար քաջածանոթ լինի ՀՀ-ում գործող օրանսդրությանն ու դրա հաճախակի փոփոխություններին:

- Անհրաժեշտ է ՀՀ-ի տարածքում հեռուստահաղորդումների միջոցով ծավալել քարոզչական աշխատանք, որպեսզի որքան հնարավոր է նվազեցվի ստվերը:
- Շատ լավ կլիներ, եթե ՀՀ-ի մաքսակետերում մշտական ներկրողների համար սահմանվեին որոշ արտոնություններ, օրինակ քիչ մաքս գանձվեր (ասենք խթանելու համար գոնե 2-5%-ի չափով)
- Անհրաժեշտ է ստեղծել պայմաններ և կիրառել խթանող միջոցառումներ, որպեսզի փոքր մասնավոր ձեռնարկությունները համագործակցեն միջին և խոշոր մասնավոր ձեռնարկությունների հետ, քանի որ լինելով ինքնուրույն նրանց ոչ բոլորին է հաջողվում պահպանել իր գոյությունը:
- Այսօր հաճախ, այն մարդիկ որոնք նոր են սկսում զբաղվել գործարարությամբ տեղյակ չեն նույնիսկ այդ ոլորտում գործող օրենքների: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել մի մարմին, որը կզբաղվի սկսնակ գործարարներին օրենքի ուսուցմամբ և կհովանավորվի պետության կողմից:
- Եթե նշված բարեփոխումների գոնե 50%-ը իրականացվի ապագայում, ապա նորընտիր նախագահից շատ զոհ կլինենք:
- Ամենակարևորը փոքր և միջին ձեռնարկությունների համար հանդիսանում է պետական աջակցությունն ու հովանավորությունը: Պետությունը պետք է աջակցի փոքր և նորաստեղծ ձեռնարկություններին, այլ ոչ թե նրանց հարկային բեռով ծանրաբեռնի:
- ՀՀ-ում շատ տարածված է ստվերային տնտեսությունը: Դրա հիմնական պատճառը հարկային դաշտի անկայունությունն է, ինչպես նաև «հայի» հոգեբանությունը: Դրա համար անհրաժեշտ է միջոցներ կիրառել ստվերի մասամբ նվազեցման համար: Կարևոր քայլ կլինի հոգեբանության փոխելը:
- Այսօր բիզնեսը կարիք ունի վարկավորման, հատկապես նորաստեղծ բիզնեսը: Սակայն բացի վարկը ձեռք բերելու դժվարությանը կա նաև շատ բարձր տոկոսադրույք: Դրա համար պետությունը պետք է մշակի կանոնակարգեր այդ տոկոսաչափերի վերաբերյալ և դա տարածի բոլոր վարկատուի

վրա

- Հայաստանից բազմաթիվ մասնագետներ մեկնում են արտերկիր, որտեղ իրենց աշխատանքը գնահատվում է և մենք զրկվում ենք մասնագիտական ուժից: Դրա համար անհրաժեշտ է ՀՀ-ում ստեղծել այնպիսի պայմաններ, որ լավ մասնագետը իր ունակություններով նպաստի երկրի բարեկեցությանը:
- Պետությունը պետք է սահմանի արդար մրցակցային դաշտ: Կարևոր է կոռուպցիայի վերացումը, որը կբերի բոլոր ոլորտներում կայունություն, այդ թվում նաև մրցակցային դաշտում:
- ՀՀ-ում օրենքները շատ լավն են, համարյա կատարյալ, բայց օրենքների կիրարկումը շատ վատն է: Այն ուղղակի գրված է թղթի վրա, բայց չի գործում: Եթե օրենքները գործեն ամենայն խստությամբ, ապա ամեն բան էլ իր տեղը կընկնի:
- Պետք է առավել մեծ ուշադրություն հատկացնել հարկային դաշտին: Անհրաժեշտ է կատարել բարեփոխումներ, որոնց արդյունքում նորաստեղծ փոքր և միջին հզորության ձեռնարկություններից որոշ ժամանակ հարկեր չգանձվեն, օրինակ 1 տարի, ինչը կնպաստի դրանց զարգացմանը:
- Հայաստանի համար շատ կարևոր խնդիր է այժմ հանդիսանում արտարժույթի փոխանակման կուրսի տատանումները: Դա շատ վատ է անդրադառնում, ինչպես մարդկանց զրպանի, այնպես էլ հոգեբանության վրա: Ոչքան հնարավոր է, պետք է մինիմումի հասցնել այդ տատանումների հաճախականությունը:
- Ցածրացնել հարկերի տոկոսադրույքները:
- Գյուղատնտեսության զարգացում՝ վարկային ծրագրերի սուբսիդիաները պետք է տրամադրվեն նաև հեռավոր մարզերին:
- Պահպանվի և զարգանա գոյություն ունեցող իրավիճակը:
- Կոռուպցիայի վերացում, բյուրոկրատիայի վերացում:
- Հարկային դաշտի կատարելագործում:
- Հայաստանում գործող մոնոպոլիայի վերացում:

- Ավելի մեծ ուշադրություն դարձնել Երևանից հեռու գտնվող վայրերին:
- Ոչ արդար մրցակցության դեմ ակտիվ պայքար:
- Կաշառակերությունը վերացնել և վերանայել հարկային օրենսդրությունը:
- Վարկի տրամադրման ցածր տոկոսադրույք:
- Գործարանների և նոր աշխատատեղերի բացում:
- Նորստեղծ բիզնեսներին աջակցություն տրամադրվի:
- Ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ համայնքում ներդրումները կապված զբոսաշրջության հետ աճեն:
- Ստեղծել պարզ և մատչելի օրենքներ:
- Բացառել հարկային դաշտի հաճախակի փոփոխությունները:
- Պայմաններ ստեղծել մարդկանց արդար աշխատանքի համար:
- Ստեղծել արդար մրցակցային դաշտ, հարկային համարարգի պարզեցում:
- Վերացվի «տանիք» հասկացողությունը:
- Հարկային բեռի թեթևացում:
- Լինի արդարություն «ով աշխատի նա կուտի» և ոչ թե հակառակը:
- Անտեղի ստուգումների նվազեցում:
- Ոչ մի առաջարկ անարդյունավետ չէ:
- Ով էլ ընտրվի նախագահ ՓՄՁ ոլորտը կմնա նույնը:
- Չեն կարող նախորոք ինչ-որ բան ասել, ամեն ինչ պարզ կլինի միայն ընտրություններից մեկ կամ երկու տարի հետո:
- Ամենայն հավանականությամբ նոր նախագահ ընտրելուց հետո աճ տեղի կունենա:
- Հույսով եմ, որ նոր նախագահը կնվազեցնի երկրի մարդկային արտահոսքը, նոր աշխատատեղերի բացման շնորհիվ:
- Նորընտիր նախագահից ակնկալում եմ ՓՄՁ ոլորտում աճի մի-

տում, կենտրոնացումը Երևանից կփոխանցվի դեպի մարզեր և տնտեսությունը էլ ավելի կզարգանա:

- Երկիրը հարուստ է ոչ թե առանձին սուբյեկտների գրպանները դատարկելով, այլ հարուստ սուբյեկտներով: Աղքատ սուբյեկտները չեն կարող հարուստ երկրի մաս կազմել: Քաղաքականությունը պետք է լինի այնպիսին, որ տերը լինի ոչ թե հարկահավաքը, այլ հարկատուն:
- Անհրաժեշտ է փոխել հարկային համակարգը:
- Այս երկրում արդարություն չկա: Պաշտոնյաները իրենց գրպանի մասին են մտածում, իսկ ժողովուրդը նրանց համար անգամ վերջին տեղում չէ: Մարդիկ հնարավորություն չունեն իրենց երկրում ընտանիքը պահելու համար բավական գումար վաստակել: Քաղաքականությունը գտնվում է գրոյական վիճակում:
- Մեծ կարևորություն ունի նաև զբաղվածության խնդիրը: Մասնավորապես երիտասարդ կադրերի աշխատանքի խնդիրը իրենց մասնագիտության գծով:
- Կուզենայի վերանար կոռուպցիան և արդարություն լիներ:
- Կառավարության աջակցություն մանր և միջին բիզնեսին: Խոշոր և գերխոշոր ձեռնարկատերերը հարկային դաշտ բերվեն:
- Ֆինանսական օլիգարխներին հարկային դաշտ բերել, այսինքն նրանք իրենց հարկերը վճարեն և պետությանը չվճարած հարկերի հաշվին "բարերարներ" չդառնան:
- Կցանկանամ, որ ամեն ինչ արդար լինի:
- ՓՄՁ-ներին հնարավորություն տալ զարգանալու: Չնեղել այլ օրգանների միջոցով:
- Պետք չէ անըդիստ օրենքներ փոխել, անհրաժեշտ է հետևել օրենքների կիրարկմանը:
- Ամենից կարևորն է կիրարկել օրենքները:
- Կարևորը, որ մտածեն ոչ թե սեփական գրպանի, այլ հասարակ քաղաքացիների կյանքի բարելավման մասին: Յանկալի է, որ

հնարավորության սահմանում աշխատեն ազնիվ և խղճով:

- Շատ թանկ են հեռախոսի, էլեկտրաէներգիայի վարձավճարները:
- Գործարաններին անհրաժեշտ է աջակցություն պետական մարմինների կողմից, անհրաժեշտ է կրճատել հարկերի տեսակներն ու հարկերի դրույքաչափերը:
- Անհրաժեշտ են հասարակության խիստ բևեռացվածության մեղմացում, քաղաքի և մարզերի միջև տարբերության կրճատում, հասարակության սոցիալական վիճակի բարելավում, վարչական շրջանների ճիշտ բաժանում:
- Սոցիալական վիճակի մակարդակի բարձրացում: Վերացնել քաղաքի և շրջանների միջև զարգացման աստիճանի տարբերությունը: Աշխատատեղերի ավելացում և շինարարության աջակցություն մարզերում:
- Մասնավոր ձեռնարկությունների պետական կոռույցների հետ համագործակցված աշխատանքը հնարավորություն կտա գերծմնալ նշված թերություններից և խթանել փոքր և միջին բիզնեսը:
- Պետք է բարձրացնել մանր ու միջին բիզնեսով զբաղվող ձեռնարկատերերի պաշտպանվածության աստիճանը: Խիստ պարզեցնել հարկային օրենսդրությունը, դրանում գործող օրենքները, թեթևացնել հարկային բեռը, ստեղծել պարզ աշխատանք:
- Հարկային համակարգի պարզեցում փոքր և միջին բիզնեսի զարգացման նպատակով:
- Օրենքը պետք է գործի բոլորի համար, ընտրությունները լինեն ազատ և արդար, կառավարությունը մեծ ուշադրություն դարձնի փոքր և միջին բիզնեսի վրա, հարկերի տոկոսադրույքները իջեցվեն՝ հատկապես մարզերում:
- Վարկերի տոկոսադրույքները չպետք է գերազանցեն տարեկան 7-9%-ը, հատկապես փոքր ձեռնարկությունների համար: Ժամանակն է երկարաժամկետ՝ 3 տարուց ավելի, վարկավորում սկսել:
- Հարկերի նվազեցում, օրենքները գրվում են, բայց չեն կատար-

վում: ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսը չի զարգանում, վիճակը ավելի է վատանում, հարկերը բարձրանում են, իսկ հարկային մարմնում աշխատողը պատասխանում է. «... մենք պլան ենք կատարում, ձեռք չի տալիս՝ լուծարեք կազմակերպությունը»:

- Մարզերում գործող ՓՄՁ-ների համար կառավարությունը պետք է համագործակցի, աջակցի և հարկային բեռը թեթևացնի: Պետք է կանխվեն օրենսդրական և վարչարարական չարաշահումները, որոնք փոքր բիզնեսին դեպի ստվեր են մղում:
- Մասնավոր ձեռնարկատիրության զարգացման համար պետք է լինի պետական մոտեցում՝ մանր ու միջին բիզնեսի յուրաքանչյուր մասնավոր ձեռնարկատեր կամ մենատնտես հնարավորություն ունենա արտադրանքը շուկա հանել և ստացված շահույթից փակել բարձր տոկոս կազմող վարկը և հարկերը: ՓՄՁ-ն երկրի հիմքն է, որին հաջորդում է պետության կայացումը և բարգավաճումը:
- Համախառն արդյունքի 90-95%-ը ստվերային է և պատկանում է 5-10% սեփականատերերի, որոնք էլ օգտվում են "տանիք"-ից: Պետք է սահմանափակել սփյուռքի "գործարարներից" և միջազգային ֆինանսական մարմինների ստրկական պայմաններով տրվող միջոցներից: Քաղաքական կողմնորոշման պաշրջ պետք է ուղղել դեպի Հյուսիս:
- Ներկա իրավիճակում անհրաժեշտ է թեթևացնել հարկային բեռը, նվազեցնել այն աստիճանի, որ գործարարը հաճույքով իրականացնի իր հարկային պարտավորությունները:
- Ընտրությունները պետք է չկեղծվեն:
- Ինչքան հնարավոր է զերծ մնալ սուտ խոստումներից և բամբասանքներից:
- Հրատապ վերականգնել պարզեցված հարկը նախքին տեսքով: Անբարեխիղճ հարկատուների համար տարվա առավել եկամտի չափը կարելի է իջեցնել: Այլ կերպ շուտով բիզնեսը կջախջախվի:
- Երիտասարդներին հնարավորություններ տալ բոլոր բնագավառներում: Երկրին պետք են նոր կադրեր:
- Միջին և փոքր բիզնեսի արտադրական հատվածին հարկել

հաստատագրված հարկով, հաշվի առնելով նրա արտադրական հզորությունները: Արտոնությունները տալ թեթև արդյունաբերության ոլորտին, այդ ոլորտը շատ աշխատազբաղ է և քիչ էներգատար:

ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԱՂՎԱ ՕՐԸ (ԸՍՏ ՀՀ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ)

ՀՀ նախագահական ընտրություններ 2008-ի նախօրեին Երևանում, Գեղարքունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի մասնավոր ձեռնարկատիրության երեք և կես հարյուրից ավել ներկայացուցիչների շրջանում անցկացրած հարցման արդյունքների հիման վրա ձևավորվեց մասնավոր հատվածի մտահոգություններն ամփոփող հանգուցային այն հիմնահարցերի շարքը, որը նախաձեռնող խումբը որպես ոլորտի ներկայացուցիչների յուրօրինակ պատգամ ներկայացրեց նախագահության թեկնածուների՝ Արթուր Վահանի Բաղդասարյանի (Օրինաց Երկիր կուսակցություն), Արտաշես Մամիկոնի Գեղամյանի (Ազգային Միաբանություն կուսակցություն), Տիգրան Կարապետի Կարապետյանի (Ժողովրդական կուսակցություն), Արամ Սերգեյի Հարությունյանի (Ազգային Համաձայնություն կուսակցություն), Վահան Էդուարդի Հովհաննիսյանի (Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցություն), Վազգեն Միքայելի Մանուկյանի (Ազգային Ժողովրդավարական Միություն կուսակցություն), Արման Վարդանի Մելիքյանի, Սերժ Ազատի Սարգսյանի (Հայաստանի Հանրապետական կուսակցություն) և Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյանի ուշադրությանը:

Նախագահության թեկնածուների պատասխանները բացահայտում են նրանց դիրքորոշումը վերոհիշյալ հիմնախնդիրների վերաբերյալ և թույլ են տալիս գնահատել դրանց լուծմանն ուղղված մասնավոր հատվածի և իշխանության գործադիր թևի միջև հետագա կառուցողական համագործակցության հեռանկարը:

Նախագահության բոլոր թեկնածուները կարևորում են մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման, հատկապես նոր աշխատատեղերի ստեղծման և աղքատության կրճատման գործում:

Նրանք համաձայն են նաև մասնավոր ձեռնարկատիրության

ներկայացուցիչների հարցման մասնակիցների մեծամասնության այն կարծիքի հետ, թե երկրում մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի զարգացման աստիճանը դեռևս բավարար չէ և մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում բարեփոխումների իրականացումը խիստ կարևոր խնդիր է:

Համակարծիք են մասնա այն մտքի հետ, որ ձեռնարկատիրության պետական աջակցության համակարգի արդյունավետությունը ցածր է:

Նախագահության թեկնածուներից ութի կարծիքով ևս ձեռնարկությունների 50%-ը հարկերի, ընթացակարգերի և վարչարարության հետ առնչվող խնդիրները լուծելու համար օգտվում են “տանիքի” ծառայություններից: ՀՀ վարչապետ պարոն Սերժ Սարգսյանի կարծիքով դրանց թիվը կազմում է ձեռնարկությունների 5 - 10 %-ը:

Նախագահության թեկնածուները, բացառությամբ պարոն Վահան Հովհաննիսյանի, որը որևէ կերպ չի անդրադարձել այս խնդրին, համաձայն են հարցման մասնակից փոքր և միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչների ոլորտի բարեփոխումներին ուղղված հետևյալ միջոցառումների անհրաժեշտության հետ.

- փոքր և միջին ձեռներեցության խթանում իշխանության բոլոր մակարդակներում,
- փոքր և միջին ձեռնարկատիրության պաշտպանվածության մեխանիզմների մշակում ու ներդրում,
- սկսնակ փոքր և միջին ձեռնարկատիրության հանդեպ հատուկ պետական հոգածություն և աջակցություն:

Դրանով հանդերձ հարցաշարում բերված որոշ հարցերի շուրջ նախագահության թեկնածուների մոտեցումներն ու դիրքորոշումները տարբերվում են:

Դիտարկենք դրանք:

Արթուր Բաղդասարյան

Օրինաց Երկիր կուսակցության առաջնորդը համաձայն է մասնավոր ձեռնարկատիրության ներկայացուցիչների հարցման արդյունքում ձևավորված ոլորտում առկա խնդիրների ըստ կարևորության ստորև բերված դասակարգման հետ.

1. Կոռուպցիա
2. Գների անկայունությունը, արժեզրկում
3. Արժույթի փոխարժեքի տատանումներ
4. Հարկերը և հարկային վարչարարություն
5. Պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ոչ մրցակցային գործունեություն
6. Արդարադատության համակարգի անկատարություն
7. Ֆինանսավորման մեխանիզմների անկատարություն
8. Տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացք
9. Գործարարության կանոնակարգման և վարչարարության անկատարություն
10. Ենթակառուցվածքների (հեռախոս, էլեկտր., ջուր, ճանապարհներ) անբավարար վիճակ

Ընտրվելու դեպքում, պարոն Բաղդասարյանը պատրաստ է ուղրտային բարեփոխումները իրականացնել համաձայն մասնավոր ձեռնարկատիրության ներկայացուցիչների հարցման արդյունքում ձևավորված առաջնահերթության.

1. տնտեսական օրենսդրության կատարելագործում
2. արդար մրցակցային դաշտի ապահովում
3. կոռուպցիայի դեմ պայքար
4. հարկային և մաքսային բարեփոխումներ
5. համայնքների տնտեսական զարգացում
6. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ

Արտաշես Գեղամյան

Ազգային Միաբանություն կուսակցության թեկնածու պարոն Արտաշես Գեղամյանը ոլորտում առկա խնդիրների շարքում առավել մեծ կարևորություն է տալիս հետևյալ երեքին.

1. Կոռուպցիա
2. Արժույթի փոխարժեքի տատանումներ
3. Պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ոչ մրցակցային գործունեություն

Իսկ նախագահ ընտրվելու դեպքում մտադիր է ոլորտային բարեփոխումներն իրականացնել՝ պահպանելով հետևյալ առաջնահերթությունը.

1. կոռուպցիայի դեմ պայքար
2. արդար մրցակցային դաշտի ապահովում
3. տնտեսական օրենսդրության կատարելագործում
4. համայնքների տնտեսական զարգացում
5. հարկային և մաքսային բարեփոխումներ
6. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ

Նա հարցաթերթիկում արել է հետևյալ նշումը. «Գտնում եմ, որ շատ օգտակար գործ էք նախաձեռնել: Հաջողություն եմ ցանկանում բոլորիս»:

Տիգրան Կարապետյան

Ըստ Ժողովրդական կուսակցության նախագահ՝ պարոն Տիգրան Կարապետյանի, մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում առկա խնդիրները բոլորն էլ միջին կարևորության են, իսկ ոլորտային բարեփոխումների իրականացման մեջ առաջնահերթ են հետևյալ երեք հիմնախնդիր.

1. արդար մրցակցային դաշտի ապահովում
2. կոռուպցիայի դեմ պայքար
3. համայնքների տնտեսական զարգացում:

Արամ Հարությունյան

Ազգային Համաձայնություն կուսակցության թեկնածու պարոն Արամ Հարությունյանը մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը խոչընդոտող խնդիրներից որպես առավել խոշոր առանձնացրել է հետևյալ հինգը.

1. Կոռուպցիա
2. Գների անկայունությունը, արժեզրկում
3. Արժույթի փոխարժեքի տատանումներ
4. Պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ոչ մրցակցային գործունեություն
5. Ֆինանսավորման մեխանիզմների անկատարություն

Ոլորտային բարեփոխումները պարոն Հարությունյանը մտադիր է իրականացնել հետևյալ առաջնահերթության համաձայն.

1. կոռուպցիայի դեմ պայքար
2. տնտեսական օրենսդրության կատարելագործում
3. արդար մրցակցային դաշտի ապահովում
4. հարկային և մաքսային բարեփոխումներ
5. համայնքների տնտեսական զարգացում
6. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ

Նախագահության թեկնածուն առաջարկում է նաև «... ստեղծել տնտեսական պառլամենտ, որի մեջ գործարարները կմտնեն ըստ իրենց մուծած հարկերի, սոց.վճարումների և ներդրումների ցուցանիշների: Դրանով հնարավոր կլինի բաժանել տնտեսական և քաղաքական իշխանությունը»:

Վահան Հովհաննիսյան

Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության թեկնածու պարոն Վահան Հովհաննիսյանը ոլորտում առկա խնդիրներից առավել կարևոր է գտնում հետևյալ երեքը.

1. Կոռուպցիա
2. Պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ոչ մրցակցային գործունեություն
3. Արդարադատության համակարգի անկատարություն

Պարոն Հովհաննիսյանը գտնում է, որ ոլորտային բարեփոխումները պետք է իրականացվեն հետևյալ առաջնահերթության համաձայն.

1. արդար մրցակցային դաշտի ապահովում
2. կոռուպցիայի դեմ պայքար
3. համայնքների տնտեսական զարգացում
4. հարկային և մաքսային բարեփոխումներ
5. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ
6. տնտեսական օրենսդրության կատարելագործում

ՀՅԴ թեկնածուն հարկ է համարել նաև նշել, որ «Տնտեսական քաղաքականությունը և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը միշտ եղել է ՀՅԴ-ի ուշադրության կենտրոնում: Ամենակարևոր խոչընդոտը մենք դիտում ենք մրցակցային կարգի բացակայությունը: Նախագահ ընտրվելու դեպքում Վահան Հովհաննիսյանը երկրում հաստատելու է մրցակցային կարգ բոլոր ոլորտներում և իրականացնելու է տնտեսական մենաշնորհների կազմացում»:

Վազգեն Մանուկյան

ՀՀ նախագահության թեկնածու, Ազգային Ժողովրդավարական Միություն կուսակցության նախագահ՝ պարոն Վազգեն Մանուկյանը համաձայն է մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում առկա խնդիրների գործարարության ներկայացուցիչների հարցման արդյունքում ձևավորված ըստ կարևորության դասակարգման հետ:

ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում ոլորտի բարեփոխումների իրականացումը պարոն Մանուկյանը պատրաստ է իրականացնել հետևելով առաջնահերթությանը.

1. արդար մրցակցային դաշտի ապահովում
2. հարկային և մաքսային բարեփոխումներ
3. տնտեսական օրենսդրության կատարելագործում
4. կոռուպցիայի դեմ պայքար
5. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ
6. համայնքների տնտեսական զարգացում

Նախագահության թեկնածուն նշել է. «Առաջարկությունները մեր նախընտրական ծրագրից են:

Օրենսդրորեն չեղյալ հայտարարել 2007թ. հուլիսի 3-ին ընդունված «Պարզեցված հարկի մասին» ՀՀ Օրենքում կատարված փոփոխություններն ու լրացումները, ըստ որի՝ զգալիորեն կրճատվեց այդ հարկատեսակից օգտվողների քանակը: Փոխարենը առաջարկվում է մեծացնել պարզեցված հարկման ենթակա շրջանառության չափը՝ 50 մլն դրամից դարձնելով 100 մլն դրամ: Բացի այդ, 100-300 մլն դրամի շրջանառության դեպքում շահութահարկը պետք է կազմի 10%, իսկ 300-500մլն դրամ շրջանառության դեպքում՝ 15%: 500 մլն-ից բարձր շրջանառությունը պետք է հարկվի 20%-ով: Տես ծրագրում «Տնտեսություն և սոցիալական ոլորտ» գլուխները: Ծրագրին կարելի է ծանոթանալ www.vazgenmanukyan.am ինտերնետային կայքում»:

Արման Մելիքյան

«Երկրում ցանկացած ոլորտի, բնականոն զարգացման համար անհրաժեշտ է պետական կառավարման կոռուպցիոն համակարգի վերացում և կառավարման նոր համակարգի ներդրում, ինչը կապահովի ոչ միայն մասնավոր ձեռնարկատիրության, այլև պետության և հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտների հաստատուն զարգացում: Կից՝ Ձեզ է ուղարկվում իմ նախընտրական ծրագիրը, որի հետ կապված բոլոր հարցերը կարող ենք քննարկել մեր մոտակա հանդիպման ժամանակ:

Շնորհակալություն»:

Մերժ Սարգսյան

Հայաստանի Հանրապետական կուսակցության թեկնածու, Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ, ՀՀ վարչապետ՝ պարոն Մերժ Սարգսյանը ևս համաձայն է մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում առկա խնդիրների գործարարության ներկայացուցիչների հարցման արդյունքում ձևավորված ըստ կարևորության դասակարգման հետ:

Ինչ վերաբերվում է անհրաժեշտ ոլորտային բարեփոխումների առաջնահերթությանը, ապա պարոն Սարգսյանի կարծիքով իր նախագահ ընտրվելու դեպքում այն կլինի հետևյալը.

1. կոռուպցիայի դեմ պայքար
2. արդար մրցակցային դաշտի ապահովում
3. հարկային և մաքսային բարեփոխումներ
4. համայնքների տնտեսական զարգացում
5. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ
6. տնտեսական օրենսդրության կատարելագործում

Ըստ նախագահության թեկնածու պարոն Մերժ Սարգսյանի «Մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի զարգացման կարևորությունը մեծ դեր ունի նաև երկրում մրցունակության և գիտելիքահենք տնտեսության զարգացման մեջ:

Հարցաթերթիկում նշված նկատառումների վերաբերյալ բոլոր հայեցակարգային մոտեցումները հանգամանալից ներկայացված են ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրում, մասնավորապես, ձևակերպված է հետևյալ տեսլականը. «Հայաստանը պետք է ճանաչվի որպես ազատ մրցակցային միջավայրում գործարարության և ներդրումների համար լավագույն պայմանները ապահովող երկիր, որտեղ կգերակայի գիտելիքի վրա հիմնված հասարակությունը», որի ներքո կարևորվում է.

- ◆ ժամանակակից արդյունավետ պետական կառավարման համակարգի ձևավորումը, որը կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն երաշխիքն է,
- ◆ պետական և մասնավոր հատվածների միջև գործընկերության հայեցակարգի ներդրումը,
- ◆ ներդրումները և ակտիվ բիզնեսը քաջալերելու նպատակով մեր երկրի հարկային և մաքսային համակարգերի միջազգայնորեն մրցունակ դարձնելը,
- ◆ բիզնեսի կայացմանն ու զարգացմանը տնտեսության կարգավորման արգելք չդառնալու ապահովումը՝ ծառայեցնելով այն հավասար պայմանների ապահովման, զարգացման աջակցության և ռիսկերի նվազեցման նպատակներին, այլ ոչ հակառակը,
- ◆ համաշխարհային չափանիշներին համապատասխանող հայկական ընկերությունների կայացմանը շարունակական աջակցությունը՝ ներդրումներ կատարելով նորաստեղծ ընկերություններում և ֆինանսական օգնություն ցուցաբերելով արագացված աճի փուլում գտնվող փոքր և միջին ձեռնարկություններին:

Նշված հարցերին առնչվող դրույթները ավելի մանրամասն ներկայացված են ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրի «Միասնությունը որպես երկրորդ սերնդի բարեփոխումների նախադրյալը», «Հայաստան, որին մենք ձգտում ենք», «Մրցակցային, նորամուծական տնտեսություն», «Պետական կառավարման արդյունավետ համակարգ» և «Տարածքների համաչափ զարգացում» բաժիններում: Բացի այդ, նշված հարցերին առնչվող առանձին դրույթներ ներկայացված են նաև ՀՀ Կառավարության գործունեության ծրագրում»:

Լևոն Տեր-Պետրոսյան

ՀՀ նախագահության թեկնածու պարոն Լևոն Տեր-Պետրոսյանը մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում առկա խնդիրների շարքում որպես առավել խոշոր առանձնացնում է հետևյալ վեցը.

1. Կոռուպցիա
2. Հարկեր և հարկային վարչարարություն
3. Պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ոչ մրցակցային գործունեություն
4. Արդարադատության համակարգի անկատարություն
5. Ֆինանսավորման մեխանիզմների անկատարություն
6. Ենթակառուցվածքների (հեռախոս, էլեկտր., ջուր, ճանապարհներ) անբավարար վիճակ

Նախագահ ընտրվելու դեպքում, պարոն Տեր-Պետրոսյանը մտադիր է ոլորտի բարեփոխումներն իրականացնել ստորև բերված առաջնահերթության համաձայն.

1. կոռուպցիայի դեմ պայքար
2. հարկային և մաքսային բարեփոխումներ
3. վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ
4. արդար մրցակցային դաշտի ապահովում
5. համայնքների տնտեսական զարգացում
6. տնտեսական օրենսդրության կատարելագործում

Նախագահության թեկնածու պարոն Լևոն Տեր-Պետրոսյանի կարծիքով «Փոքր և միջին բիզնեսի զարգացման հարցում անհրաժեշտ է իրավական և վարչարարական միջոցառումների ծրագրերի մշակում, որտեղ պետք է ընդգծվեն առաջնահերթությունները, մասնավորապես նոր աշխատատեղերի ստեղծումը, փոքր քաղաքներում և գյուղական վայրերում, աղքատության կրճատումը, մինչդեռ հարկային խնդիրները պետք է համարվեն ստորադաս, երկրորդային: Այդ իսկ իմաստով անհրաժեշտ է միջոցառումների այնպիսի ծրագրի մշակումը, որը հավասարապես ներառի թե սկսնակ ձեռնե-

րեցների օժանդակության խնդիրները և թե իրավական մեխանիզմներն ու երաշխիքները»:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

1. Խնդրում ենք գնահատել երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացման աստիճանը:

բավարար է բավարար չէ տեղյակ չեմ

2. Որքանո՞վ են պետական կառավարման մարմիններն օժանդակում Ձեր ձեռնարկության գործունեությանը:

շատ են օգնում որոշ չափով օգնում են անտարբեր են
 չեն օգնում խանգարում են

3. Ինչպե՞ս եք գնահատում կառավարման մարմինների ծառայությունների մատուցման արդյունավետությունը:

արդյունավետ անարդյունավետ տեղյակ չեմ

4. Ձեր կարծիքով, ձեռնարկությունների ո՞ր տոկոսն է օգտագործում “տանիք” պետական հարկերի, կանոնակարգերի և վարչարարության հետ առնչվող խնդիրները լուծելու համար:

----- %

5. Ինչպե՞ս եք գնահատում հետևյալ խնդիրները (1 – խնդիր չէ, 2 – փոքր խնդիր է, 3 – միջին խնդիր է, 4 – մեծ խնդիր է, 0 – չգիտեմ):

ա	Տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացքը	(1)	(2)	(3)	(4)	(0)
բ	Գործարարության կանոնակարգումը և վարչարարությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)
գ	Հարկերը և հարկային վարչարարությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)
դ	Արդարադատության համակարգի գործունեությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)

ե	Ոչ մրցակցային գործունեությունը պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից	(1)	(2)	(3)	(4)	(0)
զ	Կոռուպցիան	(1)	(2)	(3)	(4)	(0)
է	Ենթակառուցվածքները (հեռախոս, էլեկտր., ջուր, ճանապարհներ)	(1)	(2)	(3)	(4)	(0)
ը	Ֆինանսավորումը	(1)	(2)	(3)	(4)	(0)
թ	Գների անկայունությունը, արժեզրկումը	(1)	(2)	(3)	(4)	(0)
ժ	Արժույթի փոխարժեքի տատանումները	(1)	(2)	(3)	(4)	(0)

6. Ըստ Ձեզ, որո՞նք են երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացման հիմնական խոչընդոտները:

- Ձեռնարկության հիմնադրման կարգը
- Սեփականատիրական իրավունքի պաշտպանված չլինելը
- Հարկային բեռը, բարդ հարկային համակարգը
- Թույլտվությունների և լիցենզիաների ստացման կարգը
- Կոռուպցիան պետական հատվածում
- Վարկերի դժվար մատչելիությունը
- Անբավարար պետական աջակցությունը
- Օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները
- Դատաիրավական համակարգի անկատարությունը
- Վարչարարական չարաշահումները

7. Ի՞նչպես կզնահատեք երկրում ՓՄՁ ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը:

խիստ անհրաժեշտ է անհրաժեշտ է անհրաժեշտ չէ

8. Ակնկալում ե՞ք արդյոք տնտեսական բարեփոխումների խթանում նորընտիր նախագահի կողմից:

այո ոչ չգիտեմ

9. Ըստ կարևորության դասակարգեք ստորև բերված ոլորտային բարեփոխումները, որոնց իրականացումը, Ձեր կարծիքով առաջնահերթ պիտի լինի նորընտիր նախագահի համար (1 - ամենակարևորն է, 6 - նվազ կարևոր)։

- տնտեսական օրենսդրության կատարելագործում
- վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ
- հարկային և մաքսային բարեփոխումներ
- ֆինանսավարկային համակարգի բարեփոխումներ
- արդար մրցակցային դաշտի ապահովում
- կոռուպցիայի դեմ պայքար
- ինովացիոն քաղաքականության մշակում և իրականացում
- ներդրումային քաղաքականության խթանում
- համայնքների տնտեսական զարգացում

10. Այլ առաջարկություններ և դիտարկումներ

..... :

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

1. Կարևորում եք արդյո՞ք մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի դերը մեր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում:

այո

ոչ

մասամբ

2. Ձեր կարծիքով հատկապես ո՞ր խնդիրների լուծման համար առավել կարևոր դեր ունի մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը:

տնտեսական աճ

նոր աշխատատեղերի ստեղծում

տարածքային զարգացում

աղքատության կրճատում

3. Համաձայն եք արդյոք հարցման մասնակիցների մեծամասնության այն կարծիքի հետ, թե երկրում մասնավոր ձեռնարկատիրության ոլորտի զարգացման աստիճանը դեռևս բավարար չէ:

այո

ոչ

տեղյակ չեմ

4. Ձեր դիրքորոշումից ելնելով, ինչպե՞ս կգնահատեք երկրում մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը:

խիստ անհրաժեշտ է

անհրաժեշտ է

անհրաժեշտ չէ

5. Համաձայն եք արդյոք հարցման մասնակիցների մեծամասնության այն կարծիքի հետ, թե ձեռնարկատիրությանը պետական աջակցության համակարգի արդյունավետությունը անհրաժեշտ է բարձրացնել:

այո

ոչ

չգիտեմ

6. Համաձայն եք արդյոք հարցման մասնակիցների մեծամասնության այն կարծիքի հետ, թե ձեռնարկությունների 50 %-ը օգ-

տագործում են “տանիքը” պետական հարկերի, ընթացակարգերի և վարչարարության հետ առնչվող խնդիրները լուծելու համար:

այո, եթե ոչ՝ տվեք Ձեր գնահատականը ----- %

7. Համաձայն եք արդյոք ոլորտում առկա խնդիրների ըստ կարևորության ստորև բերված դասակարգման հետ:

Եթե ոչ՝ տվեք դասակարգման Ձեր տարբերակը (1 – խնդիր չէ, 2 - փոքր խնդիր է, 3 – միջին խնդիր է, 4 – մեծ խնդիր է, 0 – չգիտեմ):

1.	Կոռուպցիան	(1)	(2)	(3)	(4)	(0)
2.	Գների անկայունությունը, արժեզրկումը	(1)	(2)	(3)	(4)	(0)
3.	Արժույթի փոխարժեքի տատանումները	(1)	(2)	(3)	(4)	(0)
4.	Հարկերը և հարկային վարչարարությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)
5.	Պետական կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ոչ մրցակցային գործունեությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)
6.	Արդարադատության համակարգի անկատարությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)
7.	Ֆինանսավորման մեխանիզմների անկատարությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)
8.	Տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացքը	(1)	(2)	(3)	(4)	(0)
9.	Գործարարության կանոնակարգման և վարչարարության անկատարությունը	(1)	(2)	(3)	(4)	(0)

10.	Ենթակառուցվածքների (հեռախոս, էլեկտր., ջուր, ճանապարհներ) անբավարար վիճակը	(1)	(2)	(3)	(4)	(0)
-----	---	-----	-----	-----	-----	-----

8. Տվեք ըստ առաջնահերթության ակնկալվող ոլորտային բարեփոխումների դասակարգման Ձեր տարբերակը (1 - ամենակարևորն է, 6 - նվազ կարևոր է):

- տնտեսական օրենսդրության կատարելագործում
- արդար նրբակցային դաշտի ապահովում
- կոռուպցիայի դեմ պայքար
- հարկային և մաքսային բարեփոխումներ
- համայնքների տնտեսական զարգացում
- վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ

9. Համաձայն եք արդյոք հարցման մասնակից փոքր և միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչների կարծիքով ոլորտի բարեփոխումներին ուղղված հետևյալ միջոցառումների անհրաժեշտության հետ:

- փոքր և միջին ձեռներեցության խթանում իշխանության բոլոր մակարդակներում,
- փոքր և միջին ձեռնարկատիրության պաշտպանվածության մեխանիզմների մշակում ու ներդրում,
- սկսնակ փոքր և միջին ձեռնարկատիրության հանդեպ հատուկ պետական հոգածություն և աջակցություն:

10. Ձեր դիտարկումներն ու առաջարկությունները
